

Ալիսիա ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Հարցապրույց Ասպրճո հետ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ գալիս է հազար տարին մի անգամ

Մի՛ լռիր, Աստված,
դու չէիր կարող մեղսակից լինել
արհավիրքներին աշխարհի, հոգու.
Եվ մեզ չե՛ս կարող,
չպիտի՛ լքես,-
Աստված ես եթե...

Ես ծնվել եմ, Տեր,
մի հայ արգանդից,
և, հետևաբար, դեռ աշխարհ
չեկա՞ծ,
ծանոթ եմ բոլոր
արհավիրքներին ու նախնիներին,
հատկապես նրան,
որին թույլ տվիր, որ... եղեռնանա,
ո՞վ գիտե, թե ի՞նչ
գերմարդկային ու գաղտնի օրենքի
խորհուրդով խորին...

Եվ հարց եմ տալիս,
Ի խորոց իմ այս հարցազրույցի,
և խոցված սրտի.-
Որտե՞ղ էիր դու,
տիեզերական քո ճանփորդության

ո՞ր հանգրվանում,
և այն ժամանակ ի՞նչ էիր անում,
երբ... ջարդում էին հայերին
այստեղ... Որտե՞ղ էիր, Տեր,
տիեզերական,
ո՞ր անջրպետի, ո՞ր ոլորտներում,
երբ ամբողջ մի ազգ,
իր անգործության ոտնահետքերն էր
դաջում եղեռնի անապատներում...

Որտե՞ղ էիր դու, Ամենակարող,
երբ քո ստվերի ստվերը անգամ
հերի՞ք էր, որ դու
նախահայրերիդ ասված մի բառով,
կամ մի նշանով,
կանխեիր ոճիրն այդ հրեշային:

Քո դուռն ենք այսօր
Տեր, բախում կրկին
և... պարտադրում,
որ դու, քո գալիք Արարումներով
ներմուծես նաև Արդար Դատը մեր,
մեր Երա՛զն անմեռ...
Անսա՛կ կոչն այս, Տեր,



քանզի այս խաչված ցեղն, անտարա-
կույս,
ունի մի վսե՛մ Առաքելություն-
ի շահ Մարդկության ու
Խաղաղության.-
որի Գալուստն ու Կատարումը, Տեր,
քո անմահ շնչի՞ց...

Առ մեր ուսերից
այս բեռը ցավի,
մոռացնե՛լ տուր մեզ
քարավանները սովի ու մահվան
դաջված քարտեզին ու մեր...
ուղեղում...

Սպիտա՛կ է քո պատմութանը, Տեր,
ծածկի՛ր նրանով ժողովուրդը քո,
որ արտասուքը

իր ճանապարհը գեթ մի օր շեղի՛,
և վիշտն էլ երբեք
իր կնիքը մեր սրտին չդնի՛...

Պաշտպանի՛ր Դատը
մեր սուրբ ու արդար,
որ քոնն է նաև-
ինչպես Մեծ Վի՛շտը Տիեզերական...

Ամե՛ն, ամե՛ն եմ ասում քեզ, Հզոր,
զի գուցե այդպես,
այդ ձևով միայն,
այս Հողագնդի չնչի՛ն մի մասում,
որտեղ իջել է Միածինը քո,
Արդարությունը ինքն իրեն գտնի,
վերստի՛ն ծնվի և կամ
նորոգվի...

ՀՀ ԳԱԱ-ում ԻԿՐԱՆԵՏ միջազգային կապմակերպությունն ամփոփեց հայ-իսրայելական համագործակցության ձեռքբերումները

Սույն թվականի ապրիլի 15-ին ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում (ԳԱԱ), տեղի ունեցավ հայ-իսրայելական գիտական համագործակցությանը նվիրված հանդիպում: Հանդիպման ընթացքում ամփոփվեցին գիտության ոլորտում հայ-իսրայելական համագործակցության ձեռքբերումները, քննարկվեցին Ռեյ-յատիվիստական աստղաֆիզիկայի միջազգային կենտրոնի ցանցի՝ ԻԿՐԱՆԵՏ միջազգային կազմակերպության գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում: Ելույթներով հանդես եկան ԻԿՐԱՆԵՏ-ի տնօրեն պրոֆեսոր Ռեմո Ռուֆֆինին, Հայաստանի Հանրապետությունում Իտալիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Վինչենցո դել Մոնակոն, Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Մաթիաս Քիսլերը, ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Արտակ Ապիտոնյանը, ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

Մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը: Իր ելույթում նա մասնավորապես ասաց. «Հայ-իսրայելական մշակու-



թային և գիտական համագործակցությունն ունի բազմադարյա պատմություն: Իտալական տարբեր գիտական կենտրոններում սովորում և աշխատում են հայ երիտասարդներ: Համագործակցության փայլուն օրինակ է պրոֆեսոր Ռեմո Ռուֆֆինիի ջանքերով ԻԿՐԱՆԵՏ-ի կենտրոնի հիմնադրումը Հայաստանում: Կարճ ժամանակահատվածում կենտրոնն իրականացրել է ժամանակակից հետազոտություններ՝ օգտագործելով երկրի մակերևույթի, արհեստական արբանյակների վրա տեղակայված դիտակների օգնությամբ գրանցված տվյալները: Անցած երեք տարիների ընթացքում կենտրոնի

աշխատակիցները տպագրել են 30 գիտական հոդված միջազգային բարձր վարկանիշ ունեցող պարբերականներում: Կենտրոնը կազմակերպում է միջազգային գիտաժողովներ և դպրոցներ»:

Հանդիպման ընթացքում ներկայացվեցին զեկուցումներ ԻԿՐԱՆԵՏ-ի կենտրոնների միջոցով եվրոպական տարբեր երկրների աստղաֆիզիկական կենտրոնների հետ հայ գիտնականների համագործակցության, միջազգային խոշորամասշտաբ գիտական ծրագրերի մասնակցության համար ցանցի հնարավորությունների օգտագործման, ինչպես

նաև ԻԿՐԱՆԵՏ-ի կենտրոններում հայկական ԲՈՒՀ-երի ուսանողների, ասպիրանտների և գիտաշխատողների փոխանակման ծրագրերի իրականացման վերաբերյալ:

Միջոցառումը կազմակերպել էին ՀՀ ԳԱԱ-ն, ԻԿՐԱՆԵՏ կենտրոնը և Հայաստանի Հանրապետությունում Իտալիայի դեսպանատունը:

ԻԿՐԱՆԵՏ-ը միջազգային կազմակերպություն է, որը հիմնադրվել է 2003 թվականին: ԻԿՐԱՆԵՏ-ի հիմնադիր անդամ պետություններն են Իտալիան, Հայաստանը, Վատիկանը և Բրազիլիան: ԻԿՐԱՆԵՏ-ի համակարգող կենտրոնը գտնվում է Իտալիայի Պեսկարա քաղաքում, իսկ ցանցի կենտրոնները՝ Հռոմում (Իտալիա), Նիցայում (Ֆրանսիա), Ռիո դե Ժանեյրոյում (Բրազիլիա) և Երևանում (Հայաստան): ԻԿՐԱՆԵՏ-ի նպատակը ռեյատիվիստական աստղաֆիզիկայի բնագավառում գիտական հետազոտությունների իրականացումն ու հետագա զարգացումն է, ինչպես նաև այդ բնագավառի գիտական կադրերի պատրաստումն ու վերապատրաստումը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

Մուհեմ ԳԱԼՇՈՅԱՆ

ԲՐԱԲԻՈՆ ԾԱՂԿԻ ՈՐՈՆՈՂԸ

Խառն ԴԱՇՏԵՆՑԻ ժանդար 70-ամյակի առթիվ գրված հոսքի

...Թելո Մետրոպոլիտոսը ու հարևան գյուղացիները մեծ հաջողություններ ունեցան: Վիճում են ու գնում ս. Արաբիկի պարզեցումը, թե որքան է միջոցը՝ հարյուր հազար, թե՞ հազար հազար: Հենց այդքան հայ գինվոր է հարկավոր՝ հայոց լեռները մաքրելու չարքերից... Բայց, ուզում եք հավատացե՞ք, ուզում եք՝ ոչ. մի տղա, մեծ-մեծակ մի ջահել՝ Կարմիր իրիցու տնից, ամուսնու Արաբո, ծին հեծած կանգնել է Ծիրնկատարին, սուլթան Համդիյի կռիվ է հայտարարել:

Հայ ֆիդայական շարժման սկիզբը այսպես հեքիաթային, բայց պատմականորեն ճիշտ, մեզ ներկայացնելով, խաչիկ Դաշտենցը հարց է տալիս՝ որքա՞ն ժամանակ է անցել, ահա, քսաներորդ դարի մուտքն է, բայց Դավթից մինչև Արաբոն ծիածանի կամարի տակ լեռների ու նրանց մարդկանց ճակատագրում ի՞նչն է փոխվել, կայծակնափայլ մույն լեռներն են, չարքերով լցված մույն վիհերը, իր մենակությանը խաչված մույն ժողովուրդը և ընթոստ ճակատով մույն միայնակ գինվորը՝ անույն Դավթի թե Արաբո:

...Մոսե Իմոն հասել է մինչև Ինգիլ և քրիստոնյա թագավորից, ի տեղ օգնության, մի օրորոց է ստացել նվեր: Այդ լեռների պատվիրակը աշխարհի հզորներից հզոր ո՞ր թագավորի դուռն էլ գնար, այդ օրորոցը կստանար՝ օրորիկ հույսդ:

Հույսը դարձյալ հրաշքն է: Պայթող աղբյուրի ակունքից հայտնվող Քուռկիկ Ջալալին, երկրի ընդերքից հայտնվող

հրեղեն ծին:

Այդ հրեղեն ծին Արաբոն էր:

Այդ հրեղեն ծին Աղբյուր Մետրոպոլիտոսը, Սպաղաց Մակարն էր, Գևորգ Զառուշ, Անդրանիկը, Դժոխք Հրայրը, Սմբատը, Գալեն, Չոլոն, Մորուք Կարոն, Արծիվ Պետոն, Սևքարեցի Սաքոն, Կայծակ Անդրիասը, Տեր Քաջի Ադամը, Կոտո Հակոբը, Լաճկանցի Արթնը, Առա Ջորիկը, Ալադին Միսակը, Բրինդարը, Սեյրո Պողոսը, Արտոնքա Ջնդոն, Մուրթն, Բամբակու Մելոն, այդ հրեղեն ծին Շենիքցի Մանուկն էր, Փեթարա Մանուկը, Փեթարա Թադեն, Փեթարա Ախոն, Փեթարա Իսրոն...

Պայթող Աղբյուրի հրաշքը հայ ֆիդայիներն էին:

Հրեղեն շնչով այրեր, հայրենիքի մատակցում որդիներ, որ ապրեցին միայն հայրենիքի կյանքով և դեռ իրենց կենդանության ժամանակ դարձան պատմության:

...Անօրենները դժոխք էին դարձրել այն երկիրը, ուր գործում էին հայ ֆիդայիները: Եվ նրանք կամոք էին հագել դժոխքի բոցերից կարված կրակե շապիկները: Հայրենիքի որդու առաքելությունն էր դա: Ինչպե՞ս կարող է լինել հանգիստ և անձնական ապահով կյանք, երբ հայրենիքն ինքն է անապահով, որտեղի՞ց պետք է հայտնվի անձնական երջանկությունը, երբ հայրենիքն ինքն է ապրեցանիկ, ո՞ր կտանի անձնական փառքի ձգտումը, երբ հայրենիքն ինքն է անփառունակ, ո՞րն է անձնական սերը, երբ սի-

րո օրորոց հայրենիքը դժոխքի վերակացուն է օրորում:

Քարանձավն էր նրանց տունը, ամենաշատը, ամենաշատը՝ գյուղեզրի մարագը կամ գոմը: Խոտը կամ ձյունն է նրանց անկողինը, փոթորիկն է նրանց սպիտակեղենը, քարն է նրանց բարձր, սեփական շունչն է նրանց կրակը: Չենքի հետ պսակված, ուսապարկերում մի կտոր կորեկից կամ մի բուռ փոխիմ, ուսապարկերում իրենց պատանքացուն, հպարտ ճակատները թշնամու նենգ զնդակի դեմ բաց, զօր ու զիշեր լեռներում քայլում են կրակե շապիկ հագած աստվածները:

Արաբոյություն է անանձնական կյանքը: Այդպիսի կյանքով կարող է ապրել միայն նա, ով իր ազատությունը չի զատում հայրենիքի ազատությունից, ով իր փառքը չի բաժանում հայրենիքի փառքից, ով իր երջանկությունը չի բաժանում հայրենիքի երջանկությունից, ով իր սերը չի զատում հայրենիքի սիրուց... Ասպետություն, ազատություն, հերոսություն, փառք և երջանկություն է անանձնական կյանքը: Եվ անահման է անանձնական կյանքի սահմանը:

Կարմիր իրիցու տան երբեմնի ավետարանում գրված է եղել թե՛ ավետյաց երկրի լեռներում մի ծաղիկ է աճում՝ երջանկության Բրաբիոն ծաղիկը: Շատերն են ելել երջանկության ծաղիկը որոնելու, էն գլխեն որոնել են, բայց ոչ մեկը չի գտել: Եվ երջանկության ծաղիկ ետևից

գնացողը այլևս համարվում էր ցնորքով տարված, խենթ:

Այդ «խենթը» Կարմիր իրիցու տան Արաբոն էր:

Հայոց լեռների երջանկության ծաղիկ որոնող «խենթերը» ֆիդայիներն էին:

Մի տղա, միայնակ ու ասպետ մի գինվոր՝ արյունարբու ու նենգ մի բանակի դեմ: Յոթ գինվոր՝ յոթ բանակի դեմ: Ամենաշատը քառասուն գինվոր՝ քառասուն հազարանոց արյունարբու ու նենգ բանակի դեմ («Քառասուն» թիվը հեքիաթային է, իսկ պատմությունը՝ իրական): Միայնակ գինվորը գիտեր, որ մի բանակի հաղթել չի կարող: Քառասունը գիտեին, որ հաղթանակը քառասուն գազ խորը՝ քառասուն ջրաղացքարի տակ է, սակայն... որոնում էին իրենց լեռների Բրաբիոն ծաղիկը: Կհաղթես, թե կպարտվես՝ չարի դեմ չարանալը առաքելություն է, կգտնես, թե ոչ՝ հայրենիքի երջանկության ծաղիկը որոնելը հայրենիքի որդու պարտքն է:

Ուխտին հավատարիմ՝ զենքին պսակված, նրանցից շատերը փաթաթվեցին իրենց պատանքացու կտավներով և, որպես Բրաբիոն ծաղիկի հունդեր, թաղվեցին սարերում: Ով մնաց՝ տեսավ հայ գողգոթան: Եվ տեղահանվող, լլկվող, մորթվող ու այրվող ժողովրդի համար դարձավ պաշտպան բանակի խորհրդանիշ և բանակ, առաջնորդի խորհրդանիշ և առաջնորդ, կամքի խորհրդանիշ և կամք, հույսի խորհրդանիշ և հույս...



ԱՐԱՄ



ԱՐՏՆՈՐ ՄԵՐՈՔ



ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ



ՍՄԲԱՏ ԲՈՐՈՅԱՆ (Մախլուտ)



ԺԱՎԱԴԵՆ ԿԱՐԱՎԵՏ

ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի և Ֆրանսիայի Թուլուզի ինֆորմատիկայի հետազոտությունների ինստիտուտի 15-ամյա համագործակցության արդյունքները



Սույն թվականի ապրիլի 11-ին ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս Յուրի Շուքուրյանը և Թուլուզի ինֆորմատիկայի հետազոտությունների ինստիտուտի տնօրեն ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր Միշել Դալդեն ամփոփեցին ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի և Ֆրանսիայի Թուլուզի ինֆորմատիկայի հետազոտությունների ինստիտուտի 15-ամյա համագործակ-

ցության արդյունքները:

Շնորհիվ հայ-ֆրանսիական գիտական համագործակցության հնարավոր է դարձել իրականացնել հետևյալ գիտական ծրագրերը.

- Հայաստանում անցկացված Ֆրանկոֆոնիայի օրերին ստորագրվել է համաձայնագիր, որի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ին նվիրաբերվել է բարձր արտադրողականության հաշվողական համակարգ, ո-

րը կարող է Հայաստանի ազգային սուպերկոմպյուտերային կենտրոնի ստեղծման հիմք ծառայել:

- Ստեղծվել է ամպային տարածություն, որը գիտական հանրությանը և բիզնես սեկտորին հնարավորություն է տալիս կատարել մեծ հաշվարկներ: Դա հնարավորություն կտա Հայաստանում ստեղծել միասնական ամպային հարթակ՝ նման հայտնի google և amazon ծառայություններին, Հայաստանում արտադրվող մեծ տվյալները և մեծ հաշվարկներն իրականացնել Հայաստանում տեղադրված ռեսուրսների հաշվին:

- Մշակվում են ժամանակակից կոմպլեքս ծառայություններ արհեստական բանականության, մեծ տվյալների խնդիրների լուծման համար:

- Մշակվել են բարձր տեխնոլոգիական ծառայություններ, որոնք կիրառվում են հիդրոօդերևութաբանության, բնապահպանության, երկրաբանության, կլիմայի փոփոխության համալիր խնդիրների լուծման համար: Համագործակցության արդյունքում Հայաստանի և Ֆրանսիայի հիդրոօդերևութաբանական ծառա-

յությունների միջև սկսվել է համագործակցություն հիդրոօդերևութաբանության ոլորտում:

- Մեծացել է Հայաստանի միջազգային ճանաչելիությունը տեղեկատվական տեխնոլոգիաների և կոմպյուտերագիտության ոլորտներում: Հայ-ֆրանսիական համագործակցության շրջանակներում Հայաստան են այցելել բարձր տեխնոլոգիաներ ունեցող գիտնականներ և փորձագետներ, ովքեր մասնակցել են բազմաթիվ միջազգային գիտաժողովների և գիտական քննարկումների:

- Պատրաստվել են միջազգային ստանդարտներին համապատասխանող գիտական կարգեր, որոնց տրվում են ֆրանսիական նմուշի դիպլոմներ: Հայաստանի ֆրանսիական համալսարանում 2019 թ. բացվել է նոր՝ ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ, որի շրջանավարտները կստանան հայկական և ֆրանսիական նմուշի դիպլոմներ:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

Չդատապարտված ցեղասպանություններ

Պատմության խորքերում ձևավորված եզդի ժողովրդի հազարամյակների անցած մաքառումներով լի ուղին ցավոք, մինչև օրս էլ շարունակվում է մնալ առեղծվածային:

Եզդիները իրենց հայրենիքը համարում են Իրաքը: Եզդիների հիմնական սրբավայրը գտնվում է Իրաքի հյուսիսում ընկած Լալըշի խոր ծորում, որտեղ այսօր էլ նստում է ազգի հոգևոր առաջնորդը՝ Միրը (Միրեշեխան): Կրոնական շարժառիթներով XI դարից սկսած եզդիների մի ստվար հատված Իրաքից գաղթեց և բնակություն հաստատեց Արևմտյան Հայաստանի Կարինի, Կարսի, Դիարբեքիի և Վանի վիլայեթներում:

Իրաքում հաստատված եզդիներն ապրում են Այն-Սիֆնի, Սինջարի և Դոխուկի շրջաններում, որոնք ամփոփված են Մոսուլի նահանգի սահմաններում: Իրաքի եզդիների քանակը հաշվվում մինչև 500 հազար:

Իրենց հազարամյա պատմության ընթացքում եզդիները բազմիցս ենթարկվել են ցեղասպանության:

XIX դարի 40-ական թվականներին սանձազերծված թուրք-քրդական պատերազմական գործողությունների զոհեր դարձան ոչ միայն հայերը, այլև ասորիները, եզդիները: Եզդիների խոշոր քարոտեղի ունեցավ Մոսուլի վիլայեթի Թխոմա գավառում:

1843 թվականի մայիսին Բեդեր-խանը մյուս կողմից էլ Նուրալլահ բեկը՝ մեծաքանակ զորքով հարձակվեցին նախ Հեյլարի, ապա Թխոմա լեռնագավառի վրա: Մարդասպանության մեջ վարպետացած բարբարոս քրդերը տակն ու վրա արեցին ամբողջ Թխոման: Ջարդը սկսեցին տղամարդկանցից: Իրար կապելով առողջ երիտասարդ եզդիներին նրանց մորթեցին: Ապա ոչնչացրեցին ծերերին, փոքր երեխաներին: Վայրենի քուրդ խուլանները սվիմի վրա էին բարձրացնում մեկ կամ երկու ամսական երեխաներին և շարտում ներքև:

Իրար հետ մրցելով, քուրդ բարբարոսները սրով բացում էին հողի կանանց որովայնը, նախօրոք վիճում, թե երե-



խան տղա է, թե աղջիկ: Պակաս դաժան, անմարդկային ու անբարոյաբար չվարվեցին եզդի երիտասարդ կանանց և դեռահաս ու անչափահաս աղջիկների հետ: Իրենց անասնական կրքերին հագուրդ տալուց չկշտացած, հավաքեցին կենդանի մնացած կանանց ու աղջիկներին, ոմանց տարան իրենց մոտ, ոմանց վաճառեցին իբրև ստրուկներ:

Քրդական բարբարոսների ձեռքերով կատարված տասը հազար ասորիների և 5000 եզդիների կոտորածը ցեղասպանության սկիզբն էր Թուրքիայում:

Երիտթուրքերի կառավարությունը օգտվելով Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում հնարավորությունից իրականացրեց անպաշտպան հայ ժողովրդի եղեռնը: Թուրք բարբարոսի սուրը կախվեց նաև Արևմտյան Հայաստանում ապրող մյուս ժողովրդների գլխին, այդ թվում նաև եզդիների: Արևմտյան Հայաստանի կենդանի մնա-

ցած բնակչությունը կորցրեց ոչ միայն իր բնօրրանն, այլ նաև զրկվեց իր ունեցվածքից: Հայաստանի եզդիներին հայտնի չէ մի դեպք, որը մթագին այդ անդավաճան բարեկամությունը:

Այդ բարեկամության մեծ ջատագովներն են եղել ինչպես հայ, այնպես էլ եզդի ժողովրդի շատ արժանավոր գավակներ՝ Պողոս քահանան, Ուսուր-Բեգը, Ջորավար Անդրանիկը, Ջհանգիր աղան, Միր Իսմայիլը: Այսօր էլ բերնեբերան պատմվում է Ջորավար Անդրանիկի և Ջհանգիր աղայի մեծ բարեկամության մասին: Ազգային հերոս Ջհանգիր աղայի անունը հավասարապես թանկ է եղել թե՛ եզդի, և թե՛ հայ ժողովրդի համար: Հայերի ու եզդիների բարեկամությունը անցել է բազում փորձությունների միջով, ապրելով կողք կողքի, նրանք միշտ նեցուկ են եղել միմյանց: Ջհանգիր աղան հայկական ջոկատների հետ հերոսաբար կռվեց Բաշ-Ապարանում, Սարդարապատում:

«Նրա անունը կարող է, ո՛չ, պետք է դրվի ոչ միայն եզդի, այլև հայ նշանավոր հերոսների հետ միևնույն շարքում:

Հայոց Սպարապետ Թովմաս Նազարբեկյան:

2014 թվականի օգոստոս ամիսը եզդիների հազարամյա պատմության հերթական սև էջերից է:

Օգոստոսի 3-ից սկսած Իրաքի հանրապետության Շանգալ եզդիաբնակ մարզում «Իսլամական պետություն» կոչվող հրեշների ձեռքով տեղի ունեցավ եզդի ժողովրդի ցեղասպանություն:

Եզդիներով բնակեցված Սինջարը կամ, ինչպես ընդունված է ասել, Շանգալը, պատմական կարևորագույն նշանակություն ունի եզդիների համար: Շանգալում են գտնվում տասնյակի հասնող եզդիական սրբավայրեր և այլ պատմական, հոգևոր և մշակութային արժեքներ: Օգոստոսի 3-ից սկսած ցեղասպանության մղծավանջը ստիպում է Շանգալի եզդիներին բռնել անհայտության ճանապարհը:

Ավելի քան 450.000 եզդի դարձել են փախստական, 100000-ից ավելին օրեր շարունակ թաքնվել են Սինջարի լեռներում՝ մնալով առանց սննդի ու ջրի: Շոգի, քաղցի ու ծարավի պայմաններում շատերը չղիմացան ու կնքեցին իրենց մահկանացուն Սինջարի լեռներում: Ցավալիմ այն է, որ այս ամենը կատարվել է այսօր՝ 21-րդ դարում, քաղաքակիրթ աշխարհի աչքի առջև: Ցեղասպանություն վերապրած յուրաքանչյուր ժողովուրդ, ցեղասպանության զոհ դարձած յուրաքանչյուր ընտանիքի ժառանգորդ արդարացիորեն պահանջում է կատարված ոճրագործությունների հեղինակների կամ նրանց իրավահաջորդների կողմից ցեղասպանության ճանաչում: Ցեղասպանությունները կշարունակվեն այնքան ժամանակ, քանի դեռ ոճրագործն ըստ արժանվույն չի դատապարտվել:

**Ջենֆիրա ԽԱՏԻՎԱԿ
33 ԳԱՆ գիտաշխատող**

ԳՐԻԳՈՐԻՍ ԲԱԼԱՔՅԱՆԻ «ԱՆԻԻ ԱՎԵՐԱԿՆԵՐԸ» ԱՆԳԼԵՐԵՆՈՎ

Գրիգորիս վարդապետ Բալաքյանի Կոստանդնուպոլսում 1910-ին հրատարակված «Անիի ավերակները» գիրքը վերջերս թարգմանվել է անգլերենի Փիթեր Բալաքյանի և Արամ Արթուրի կողմից և հրատարակվել Ռատզըզ համալսարանի տպագրատան կողմից: Առաջաբանը գրել է Փիթեր Բալաքյանը: Գրքում, ըստ «Արմինյն Միրոր-Սփեքթեյթր» շաբաթաթերթի, տեղադրված են բնագրից վերցված 33 սև ու սպիտակ լուսանկարներ և մոտ մեկ տասնյակ գունավոր լուսանկարներ կատարված Փիթեր Բալաքյանի կողմից վերջին տասնամյակում:

«Անիի ավերակները» տպագիր միակ մեմագրությունն է Անիի պատմության և թողած ժառանգության մասին, ընդգրկում է 1909-ին Մատթեոս Բ. Կոստանդնուպոլսեցի (Իզմիրյան) կաթողիկոսի կղերականների


շքախումբով Անի կատարած պատմական ուխտագնացությունը:

Գրիգորիս Բալաքյանը ծնվել է 1875-ին: Կրթությունը ստացել է Կոստանդնուպոլսի հայկական վարժարանում և Արմաշի հոգևոր ճեմարանում: Հետագայում ճարտարագիտություն և աստվածաբանություն է ուսանել Գերմանիայում: Եղել է 1915 թվի ապրիլի 24-ին 250 հայ համայնքի առաջավոր գործիչներից, մտավորականներից մեկը, որոնց թուրքական կառավարությունը ձերբակալել է և բռնազաղթեցրել երկրի ծայրամասային ամայի տարածքներ: Քչերից մեկն է, որ չորս տարի կարողացել է դիմակայել դաժան պայմաններին: Հետագայում Հարավային Ֆրանսիա է տեղափոխվել, որտեղ դարձել է թեմի առաջնորդ: Վախճանվել է Մարսելում 1934-ին: Հեղինակ է նաև

«Հայկական Գողգոթան» գրքի, որը եղեռնի տարեգրությունն է, վերապրողի հուշագրություն: Այն նույնպես թարգմանվել էր անգլերենի 2010-ին:

Վերջերս լույս տեսած «The Ruins of Ani» («Անիի ավերակները») անգլերեն հատորը, արդեն իսկ դրական արձագանքներ է ստացել գրաքննադատների կողմից. Ռոբերտ Ջեյ Լիֆտոնը գրել է. «Ուշագրավ և անգնահատելի ուսումնասիրություն է», Քրիստինա Մարանջին՝ «Նոր կյանք է պարգևում մի վճռորոշ, բայց մոռացված անցյալի պատմությանը», իսկ Ջեյ Ուինտերը՝ «խորապես ընդգծում է, թե ինչպես է իրականացվել անցյալում մշակութային ոչնչացումը և ինչպես է այն կրկնվում մեր օրերում մարդկության դեմ կատարվող հանցագործությունների շարքում»:

Յ. Ծ.



ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԻ ԱՌԹՎ



կովկասում, ապրելով թիֆլիսում, նա ակտիվորեն մասնակցել է գրական, հասարակական-քաղաքական կյան-


մերեքի կազակ, ռուսական բանակի զնդապետ, ապա գեներալ-մայոր, Վանի ջոկատի, այնուհետև Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի հրամանատար, բանաստեղծ Ալեքսանդր Կուլեբյակինը (1871 – ?) եղել է վառ անհատականություն՝ իր մեջ համակցել է զինվորականին, բանաստեղծին և հասարակական գործչին բնորոշ գծեր: Կովկասից ռուսական բանակի հեռանալուց հետո մնալով Անդրկովկասում, ապրելով թիֆլիսում, նա ակտիվորեն մասնակցել է գրական, հասարակական-քաղաքական կյան-

բանաստեղծությունների գիրքը (խոսքը «Միերի դուռը: Վանի արծազանքները» գրքի մասին է - Ա. Զ.) շուտով լույս կտեսնի: Կցանկանալի անձամբ ծանոթանալ Վ. Յա. Բրյուսովի հետ, բայց չգիտեմ, կհաջողվի ինձ Ջատիկին գալ. կախված է մեր զինվորական գործերից: Բարևներ Ձեր ընտանիքին: Կինս խոնարհվում է Ձեր առաջ: Ամենայն բարիք: Անկեղծորեն՝ Ձեր Ա. Կուլեբյակին»:

1917 թ. սկզբներին Ա. Կուլեբյակինը գրում է 6 մասից բաղկացած «Մասիսի խաչը: Երկու լեզենդ» («Крест Масиса. Две легенды») ստեղծագործությունը, որը նվիրում է Թումանյանին՝ հետևյալ ընծայագրով. «Բարի հիշատակ սրտանց հարգող Հայաստանի բանաստեղծ Հովհաննես Ֆադեևիչ Թումանյանին՝ հավատարիմ հեղինակից: Ա. Կուլեբյակին: 9. IV. 1917, թիֆլիս»:

Ջալալ Տեր-Գրիգորյանը (Սալյուսյան) իր հուշերում էլ գրում է. «Թումանյանի մոտ հաճախ պատահել են նաև գեներալ-մայոր Ա. Պ. Կուլեբյակինին ... իհարկե, ոչ իբրև

գեներալ-մայոր Ա. Կուլեբյակինը «Միերի դուռն» առջև (Վան, 1915 թ.):



ԲԱՆԱՍՏԵՂԾ-ԳԵՆԵՐԱԿՈՒԼԵՐԱՅԻՆ ԿՈՒԼԵԲՅԱԿԻՆԸ ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ

քին, մասնավորապես՝ հայ հասարակայնությանը հուզող կարևոր հարցերի ու խնդիրների լուծմանը: Բարեկամական, ընկերական հարաբերություններ է ունեցել, աշխատել է հայ մշակույթի, գրականության, հասարակական-քաղաքական, զինվորական բազում նշանավոր գործիչների հետ: Առանձնապես մտերիմ է եղել Հովհաննես Թումանյանի հետ:

Հովհ. Թումանյանի որդին՝ Արտավազը, Վանից թիֆլիս հորը ուղարկած 1916 թ. մարտի 26 թվակիր նամակում գրում է. «Հայրիկ ջան, երևի արդեն լսած կլինես գեներալ Կուլեբյակինի մասին: Երեկ մեզ մոտ էր ընթրիքի և ծանոթացանք: 50 ամց մի ուրախ և պատկառելի պարզ մարդ է:

Կարդաց բավականաչափ ոտանավորներ, ապա առանձնապես իմ խնդրանքով կարդաց «Ախթամարը»: «Ախթամարի» մեջ էլ մի քանի կտորներ կան, որ շատ վարպետորեն, կենդանի է գրած:

Մոտը մի քանի հաստ տետրակներ ուներ, և մեծ մասը հայկական ոգով է գրած:

Մինչև ուշ գիշեր հետաքրքրությամբ լսում էինք գեներալ-պոետի արտասանությունները:

Ընթրիքից հետո, գնալիս ինքը հանեց մի ուրիշ տետրակ և տվեց ինձ կարդալու: «Միերի դուռն» էր: Իրոք շատ հաջող կտորներ կան և նմանություններ քո «Դավթին»: Բայց մարդը ասում է՝ չեմ կարդացել, երեկ ընթրիքին քո կենացը առաջարկեց ի դեմս ... որդու:

Խնդրեց, որ վաղը, այսինքն էսօր, վերադարձնեմ «Միերի դուռը»:

Հենց գնում եմ մոտը:

Ի դեպ, 1917 թ. «Վերաշինություն» հայկական կոմիտեի հրատարակել էր Կուլեբյակինի «Միերի դուռը: Վանի արծազանքները» գիրքը: «Միերի դուռը» «Սասնա ծռեր» էպոսի Սասունցի Դավթին և Փոքր Միերին վերաբերող ավանդավեպի մշակումն էր: Գիրքը, նրան կցված ծանոթագրությունները հետաքրքրություն են ներկայացնում Կովկասյան ճակատի, հատկապես Վանի իրադարձությունների վերակենդանացման առումով:

Ռազմաճակատից թիֆլիս գալիս Ա. Կուլեբյակինը հաճախ է հանդիպել Թումանյանին, նրա հետ ունեցել է նամակագրական կապ:

1917 թ. հունվարի 10-ին գորավարը Թումանյանին է նվիրել իր գիրքը՝ «Гребеничка в плену. Казачья старина» (Վաղդիկավկաս, 1913), հետևյալ ընծայագրով՝ «Սրտանց Հայաստանի բանաստեղծ Հովհաննես Թումանյանին՝ հեղինակ Ալեքսանդր Կուլեբյակինից: 10/1 1917. Թիֆլիս»:

Ա. Կուլեբյակինը քաջատեղյակ է եղել թիֆլիսի գրական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքին: Դրա մասին են վկայում, մասնավորապես, Թումանյանին գրած նրա նամակները: Այսպես, 1917 թ. հունվարի 29-ին պոետ-գեներալը գրում է. «Բավականությամբ կհանդիպեի Ձեզ հետ, սակայն, ցավոք, առայժմ ոչ մի կերպ չեմ կարողանում ժամանակ գտնել: Վաղը ցանկանում եմ գնալ Իզոր Սևերյանին վերջին երեկոյին, որպեսզի նրա մասին ունենամ սեփական պատկերացում ... Թվում է, չեմ լսելու Վ. Բրյուսովին ... Առողջ եղեք: Բարևներ Ձեր ընտանիքին: Կինս խոնարհվում է Ձեր առաջ: Անկեղծորեն՝ Ձեր Ա. Կուլեբյակին»:

Թումանյանին հասցեագրած նույն թվականի փետրվարի 28-ի նամակում էլ գրում է. «... Ցավում եմ, որ քիչ հանդիպեցինք: Այսօր մեկնում եմ Իզորի: Վանի մասին

գեներալ, այլ որպես բանաստեղծ: Նա շատ բարձր էր գնահատում մեր բանաստեղծին, ջերմ հարգանքով էր վերաբերվում նրան և իր «Нанэ» պոեմը («Ахлатская поэма», որ տպագրված էր Բաթումում հրատարակված ... «Джейран» ժողովածուում) նվիրել է Թումանյանին: Ջրույցն Ալեքսանդր Կուլեբյակինի հետ նույնպես զուտ գրական բնույթ էր կրում: Մի անգամ Թումանյանը կարդաց իր թարգմանած «Ջրահեղձը», չհայտնելով, որ դա Պուշկինի «Утопленник»-ն է: Կուլեբյակինը, որ հայերեն չգիտեր, 2-3 տուն լսելուց հետո իսկույն ասաց.

- Դա Պուշկինի «Утопленник»-ն է:

Նա, իհարկե, այդ բանը հասկացավ չափից, ռիթմից ու համապատասխան արտասանությունից: Այնուհետև Ջրույցը շարունակվեց Պուշկինի շուրջը: Թումանյանն ասում էր, որ ռուսները նրանից ավելի տաղանդավոր բանաստեղծ չեն ունեցել մինչև հիմա:

Հիշենք նաև Թումանյանի դստեր՝ Նվարդի վկայությունը. «Առավոտյան (1919 թ. հունվարի 13-ին - Ա. Զ.) հայրիկի մոտ եկան ֆրանսիական հյուպատոս Պոլ Դյուբուան և գեներալ Կուլեբյակինը»:

1919 թ. փետրվար-մարտ ամիսներին հանդիսավորությամբ նշվել է Հովհ. Թումանյանի ծննդյան 50-ամյակը: Թիֆլիսի հասարակայնությունը՝ հայեր, ռուսներ, վրացիներ, սիրով ու մեծ ոգևորությամբ տոնում են մշակավոր քաղաքացու հոբելյանը:

Կուլեբյակինը ևս ակտիվ մասնակցություն է ունեցել Թումանյանի հոբելյանին նվիրված բոլոր միջոցառումներին: Շփվելով Թումանյանի հետ, նաև նրա միջոցով ծանոթանալով հայ ժողովրդին ու նրա մեծ վշտին՝ Կուլեբյակինը հավատում էր հայ ժողովրդի վերածննդին, նրա վառ ապագային: Դրա վկայությունն ու ապացույցն է «Հովհաննես Թումանյանին. սոնետ-ակրոստիքոս» վերնագրով խորիմաստ բանաստեղծությունը, որը պոետ-գեներալը կարդացել է 1919 թ. փետրվարի 20-ին՝ Թումանյանի ծննդյան 50-ամյակին նվիրված «Բանաստեղծների համաժողովրդական» 24-րդ նիստին:

Հայոց բանաստեղծ, քո հոգում բարի Որբա՛ն թախի՛ծ կա, որբա՛ն կշտամբանք. Վերջապես աստված ժողովուրդներին Հանգի՛ստ կառաքի, թե՞ միայն փորձանք:

Թեև վերջը խոր, բայց կապաքինմի, Ու սրտերի մեջ կշողա նոր լույս, Մի հուր սրբազան, երբ հիսուն տարի Արդեն քեզ համար երազ է և հույս:

Նայիր, աշխարհը անտառ է մի մութ, Յուրաքանչյուր թուփ շիրիմ է ասես: Ահա շողում է երկինքը կապույտ.

Նոր մի Հայաստան կշողա վառման, Ի՛նչ հեռաստան է բացվում, Հովհաննես՛: Ներշնչվիր. մարդկանց պե՛տք է Թումանյան:

Ն. Թումանյանն իր հուշերում՝ 1919 թ. դեկտեմբերի 24-ի տակ գրում է. «Երեկոյան հյուրեր շատ կային՝ պրոֆ. Տոտոմյանը, Լիսիցյանը, Գորոդեցկին կնոջ հետ, Կուլեբյակինը և ուրիշներ: Այդ երեկո հայրիկն իր նոր քառյակներից մի քանիսը կարդաց: Տպավորությունն ուժեղ էր, բոլորը հավանել էին: Հետո ինքը սկսեց խո-

սել քառյակների մասին»:

Կուլեբյակինն անձնակազմով մասնակցություն է ունեցել 1918 թ. նոյեմբերի 21-ին թիֆլիսում ստեղծված «Համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» աշխատանքներին: Գործի նախաձեռնողը Հայ հայրենակցական միությունների կենտրոնական խորհուրդն էր՝ Թումանյանի գլխավորությամբ: Հանձնաժողովը նաև նյութեր էր հավաքում պատերազմին հայ ժողովրդի մասնակցության մասին: Կուլեբյակինը գլխավորել է հանձնաժողովի չորս բաժիններից երկրորդը՝ ռազմապատմականը:

Հանձնաժողովի գործունեության հետ կապված՝ Կուլեբյակինը Թումանյանին բազմաթիվ նամակներ է հասցեագրել: Այսպես, 1919 թ. փետրվարի 5-ին գրած նամակում, մասնավորապես, ասում է. «... հայ ժողովրդի համար զոհերով և որպեսզի Փարիզի հաշտության համաժողովում բոլոր ազգերի և համաշխարհային պատմության առջև նա կարողանա ներկայացնել փաստական ապացույցներ իր ակտիվ, արյունով և անհամար զոհերով հաստատված մասնակցությունը համաշխարհային պատերազմին՝ մեզ դաշնակից պետությունների կազմում, նույնիսկ, երբ նա բացարձակապես միայնակ մնաց այդ անհավասար պայքարում»:

Հայաստանի Հանրապետության նախարարապետ Ալ. Խատիսյանին հասցեագրած նամակում Կուլեբյակինի կատարած հսկայական աշխատանքի մասին Թումանյանը գրում է. հունվար ամսից ի վեր հանձնաժողովը Փարիզի խորհրդաժողովում հայկական պատվիրակության անդամ Մ. Պապաջանյանին այլ նյութերի թվում հանձնել է «Մի մասը (314 էջ) այն զեկուցումից, որ պատրաստել է հանձնաժողովի զինվորական մասի վարիչ գեներալ Կուլեբյակինը հայերի մասնակցության մասին Համաշխարհային պատերազմում»:

Բանտից ազատվելուց հետո Կուլեբյակինը վերադառնում է թիֆլիս՝ ընտանիքի մոտ, որտեղ էլ ապրում և ստեղծագործում է: Հենց այդ ընթացքում թարգմանում է Թումանյանի քառյակներից 30-ը: 1923 թ. ապրիլի 12-ին, հայ բանաստեղծի մահից 20 օր անց, նա դրանք նվիրել է Թումանյանի ընտանիքին՝ հետևյալ ընծայագրով. «Բարի հիշատակ սրտանց սիրելի մարդու՝ Հայաստանի բանաստեղծ Հովհաննես Ֆադեևիչ Թումանյանի՝ ինձ համար թանկագին ընտանիքին. 12/IV. 1923 թ. Թիֆլիս»:

Բացի այդ, «Հովհաննես Թումանյանի հիշատակին» վերնագրով բանաստեղծության մեջ պոետ-գեներալը «վերակերտում է ազգային բանաստեղծի կերպարը, ով իր պոետական քուրայում վերամշակելով ժողովրդի ստեղծագործությունները՝ դրանք վերադարձնում է նրան՝ իր հանճարի կնիքով դրոշմված»:

Անուշավան ՉԱԲԱՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր,
«Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագիր

100 ՏԱՐԻ ԱՌԱՋ

Առաջին անգամ անգլերեն գիտական մի աշխատություն պատմում է Լևանտի հայկական լեգեոնի էպոսը. դասերով հարուստ հերոսական ու ողբերգական երանգներով մի պատմություն: Կիլիկիայի Հայկական լեգեոնի ողիսականի 100-ամյա պատմությանը նվիրված նորընծա այդ գրքին գրախոսականով անդրադառնում է «France-Armenie» հանդեսի խմբագրակազմի անդամ Տիգրան Եկավյանը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԵՈՆՆԻ ՎԵՀՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՏԱՐԱԲԱԽՏՈՒԹՅՈՒՆԸ

Տիգրան ԵԿԱՎՅԱՆ Փարիզ


1916-ին բրիտանացիներն արաբներին խոստանում էին անկախ, վերամիավորված արաբական թագավորություն: Ֆրանսիացիները ետ չէին մնում՝ վաճառելով Կիլիկիայում հայկական պետության պատրանքը, ապա իրենց հայ դաշնակիցներին լքելով նրանց իրդեհված քաղաքների մոխիրների մեջ: Հայկական լեգեոնի պատմությունը «բրիտանոյանների պաշտպան» Ֆրանսիայի համար թե՛ համընդհանուր հպարտության առարկա է, և թե՛ անցնելի մի բիծ: Առատ պատկերազարդումներով այս ստեղծագործության մեջ պատմաբան Սյուզան Փ. Փաթին անդրադառնում է ֆրանսիական բանակին միավորված այս հայկական օժանդակ զորքի պատմությանը (*): Այն ծնունդ էր առել 1916 թվականի նոյեմբերին, Փարիզի Հայ ազգային պատվիրակության այդ ժամանակվա նախագահ Պողոս Նուբար փաշայի կամքով, որը կարողացել էր համոզել իր ընկերոջը՝ վարչապետ Ժորժ Կլեմանսոյին: Մինչ շարունակվում էր հայ ժողովրդի բնաջնջումը, վերապրողները խանդավառվել էին

Կիլիկիայում անկախ հայկական պետության խոստումով: Առաջինը, 1917 թվականի հունվարին, զինվորագրվում են Եգիպտոսի Պորտ Սալիդում խմբված Մուսա լեռան նախկին դիմադրողները: Ֆրանսիական դրոշի ներքո լեգեոնների հավաքագրումը տարածվում է նաև Եվրոպայում և Ամերիկայում: 1918 թվականի մայիսին նրանց ընդհանուր թիվը կազմում է 4360 զինվոր (որոնցից 288ը՝ Ֆրանսիայի հայեր) և 58 սպա: Գերմանական սուզանավերով լի Միջերկրական ծովի վրայով դժվարությամբ հասնելով Պորտ Սալիդ՝ կամավորները մարտի են ուղարկվում միայն Կիպրոսի Մոնարազայի ճամբարում երկարատև ու ծանր վարժանքներից հետո, ֆրանսիացի սպաների հրամանատարության ներքո:

Պատմական փաստաթղթերի հիման վրա, համալրված ակամատեսների վկայություններով, նամակներով ու լուսանկարներով՝ հեղինակը ներկայացնում է մարդկային մի պատմություն, որից հորդում են արմատախիլ եղած այս երիտասարդների ցավն ու տառապանքը, անհամբեր կռվելու փափագը՝ փրկելու համար իրենց ժողովրդի բեկորներին:

Այն պատմում է նրանց ծանր կենսապայմանների մասին, ինչպես և բազմաթիվ ֆրանսիացի սպաների արհամարհանքի ու հաճախ՝ այլատյացության մասին: Կիպրոսում վարժանքներն ավարտելուց հետո, լեգեոնները քաջաբար կռվում են Պաղեստինում և Կիլիկիայում՝ դաշնակից ուժերի հրամանատար գեներալ Ալենքի կողքին: 1918 թվականի սեպտեմբերին Պաղեստինում տեղի ունեցած Արարայի ճակատամարտում նրանք լավագույնս դրսևորում են իրենց՝ վճռորոշ դեր խաղալով գերմանական և օսմանյան ուժերի պարտության մեջ, ինչի համար էլ արժանանում են դաշնակցային բարձրագույն հրամանատարության մեծարանքին: 1918 թվականի հոկտեմբերին Արևելյան լեգեոնը պաշտոնապես վերանվանվում է Հայկական լեգեոն: Լեգեոնները Կիլիկիա են ժամանում 1918 թվականի դեկտեմբերին՝ ֆրանսիական օկուպացիոն զորքերին օժանդակելու առաքելությամբ:


Ապա 120000 հայ փրկյալներ հայրենադարձվում են Կիլիկիա, սակայն նրանց վերադարձի համար պայմաններ չկային: Մեծ Բրիտանիան հետ է քաշվում՝ ֆրանսիական բա-



նակին թողնելով անբավարար մարդուժով՝ Կիլիկիայի պես ընդարձակ տարածքը վերահսկելու համար: Թեև հայ լեգեոնները լի էին վրեժի աննկարագրելի ծարավով, նրանք առաջին հերթին նախանձախնդիր էին վերապրածների մեջ փրկել հնարավորինս շատ հայերի կյանքեր՝ սկսած առևանգված և բռնի մահմեդականացված աղջիկներից: Նրանց դա բազմիցս հաջողվում է, սակայն երբեմն արդեն «ուշ» է լինում ոմանց համար, ովքեր նախընտրում են մնալ իրենց առևանգողների և իրենց երեխաների հետ: 1919 թ. մարտին ավժիրյան լե-

գեոնների հետ լարվածությունն Ալեքսանդրեթում հանգեցնում է 4-րդ գումարտակի լուծարմանը՝ սկիզբ դնելով աստիճանական զորացրման: Այդ ընթացքում քեմալական շարժումը հզորանում է, և այն աստիճան, որ Ֆրանսիան վերանայում է իր վարած քաղաքականությունը և 1919 թվականի սեպտեմբերից սկսում բանակցել թուրք ազգայնականների հետ: Ֆրանսիան, ուժասպառ, գիտակցում է, որ Կիլիկիան պահել չի կարողանա:

**Ֆրանսերենից
թարգմանեց
ԱՐՈՒՄՅԱԿ Բ.ԳՐԻՆՈՆ**



Այս տարի Հայոց ցեղասպանության 104-րդ հիշատակությունը նյույորքյան Թայմս Սթրիթում նշանավորվելու է մշակութային յուրահատուկ միջոցառումով,

որը տեղի է ունենալու ապրիլի 28-ին, ժամը 14:00-ից 16:00: Ըստ «Արմինյան Միություն» շաբաթաթերթի, ճանաչված երգիչ Էլի Բերբերյանը այդ միջոցառման

ընթացքում հնչեցնելու է մեծն Շառլ Ազնավուրի «Նրանք ընկան» (Ils Sont Tombés) երգը, հարգանքի տուրք մատուցելով ինչպես արդեն սրբերի շարքին դասված մեր անմեղ զոհերի, այնպես էլ անցյալ տարվա վերջերին վախճանված Հանսոնյեի հիշատակին:

«Ազնավուրը հայ արվեստագետների պատմության մեջ ամենամեծ լեգենդն է, և ես ցանկանում եմ իր բառերը բարձրաձայնել աշխարհի կենտրոնից», -նշել է այդ առթիվ Բերբերյանը, որ նաև ծրագրել է երգել Մաժակ Թոշկյանի երաժշտությամբ Հովհաննես Շիրազի «Ինձ կոռնանամ» (Հայոց Դանթեական) համագային հնչեղության պոեմը և գուսան Հայկազունի «Հայեր միացե՛ք»՝ որպես միասնականության ուղերձ:

Միջոցառումը վարելու են Արմեն ՄկՕմբերը և Նվայր Բեյլերյանը: Ներկա են լինելու հայ և օտար քաղաքագետներ, դիվանագետներ, մարդու իրավունքների պաշտպաններ, արվեստագետներ, հոգևորականներ և հասարակության ներկայացուցիչներ:

Թայմս Սթրիթի ավանդական ոգեկոչման արարողության հիմնադիրն է Սեմ Ազատյանը, որ Հայոց ցեղասպանության ժամանակ կորցրել է չորս հարազատներ:



րի և 1985-ին մտահղացել է Նյու Յորքից աշխարհին տեղյակ պահելու պատմության առաջին խոշոր ոճրագործության մասին:

Յ. Ծ.

ԱՅՈՐԿԱ գովազդը դարձել է մեր ուղեկիցը, որը ազդելով առանձին անհատների գիտակցության վրա, մեծ դեր ունի նշանակություն ունի հասարակական կյանքում: Այն դարձել է մշակույթի մի բաղադրիչը և շատ էական է, թե ինչ է գովազդվում և ինչպես:

Գուցե ես չանդրադառնայի այս խնդրին, եթե չլինեին իմ հյուրերը՝ քիմիկոս և ֆիզիկոս ռուս պրոֆեսորները: Նրանք առաջին անգամ էին գտնվում մեր երկրում, և նրանց ուշադրությունը գրավել էր նաև մեր գովազդային մշակույթը: Նրանք հիացնում էին դիտում «Ձեքրա» գովազդային գործակալության կողմից կազմակերպված «Հայ մեծերը» և «Սրբավայրերը» գովազդային շարքերը: Բայց տարակուսանքի մեջ էին ընկնում, երբ դիտում էին այնպիսի գովազդային պաստառներ, ինչպի-

կենտրոն: Հավանաբար դա անգլերեն «mall» բառն է, որը նշանակում է կենտրոն: Մի՞թե վատ է հնչում «Դալմա» կենտրոն կամ «Դալմա» առևտրի կենտրոն: Սակայն կասեն, թե այն միայն առևտրի կենտրոն չէ: Շատ բարի, թող հնչի «Դալմա» առևտրամշակութային կենտրոն կամ առևտրի և համագտի կենտրոն: Այստեղից հետևում է, որ «Դալմա մոլ»-ը չի արտահայտում այդ կառույցի էությունը: Մեզ պետք չեն պատահական կամ իմաստային տեսակետից ոչ ճիշտ անվանումները:

Վերը նշված շենքը արտաքինից էլ լավ տեսք ունի, ներսի միջնացքները և սանդուղքահարթակներն էլ կոկիկ ու մաքուր են: Բայց շենքից 15-20 մետր հեռավորության վրա խայտառակ տեսարան է՝ տարածքը վերածվել է աղբավայրի՝ իր գույնզգույն աղբային տեսականիով և երանգներով: Եվ սա, այսպես ասած, ընտիր (элитный) շեն-

օտար բառերը ավելի արտահայտիչ են կամ հնչել, կամ շատերի համար անհասկանալի, որը կարծես թե ստեղծում է խորհրդավորության շղարշ: Երջանկահիշատակ պապս կասեր, որ եթե մեկը աղբատնում է, ապա մյուսը հարստանում է: Կարողում ես և շփոթվում, որովհետև անհասկանալի է. դա վերաբերվում է ազգաբնակչությանը, թե պետական ու հասարակական վերնախավին: Առանց այն էլ մարդկանց մի մասը կամա թե ակամա ազդարարողներ են, և դա բոլորս էլ գիտենք: Բայց պետք չէ այդ ոգով դաստիարակել մատաղ և երիտասարդ սերնդին, ազգին պետք են կորովի և անկոտրում կամքի տեր որդիներ, ովքեր բարձր կպահեն հայրենիքի դրոշը և սահմաններն՝ անասան: Եվ ինչն է զարմանալի, իբր թե չգիտեն, թե կաշառակերությունը որտեղից է գալիս և ուր է գնում: Տարիներ առաջ պետական

համարձակվի իրենց հորջորջել ընտիր հասարակություն: Կարծեք թե գործում է այն սկզբունքը, որ ժողովուրդը ինչքան քիչ իմանա կամ չհասկանա, այնքան լավ:

Վերջերս հեռուստատեսությամբ Արամ Արախանյանի գրուցակիցը քաղաքագետ էր (կնեթի, որ անուն-ազգանունը չեմ մտապահել), ով լուրջ վերլուծություններ էր կատարում: Բայց մի քանի անգամ օգտագործեց օտար «սիտուացիոն» բառը (և ոչ միայն այս), և կարծում եմ, որ նրան կրկնողներ արդեն կգտնվեն:

ситуация - իրադրություն, կացութիւն, դրութիւն, տեղադրություն

Ռուսերենում «ситуация» բառ չկա, կա «ситуационный», բայց դե մենք բառ ստեղծող ժողովուրդ ենք և կարող ենք ձեռք մեկնել անգլերենին, լատիներենին կամ այլ լեզվի:

«Շանթ»-ի հաղորդակարգներից մեկը խոսելով Գերմանիայում վարչապետի հանդիպումների մասին, եզրակացնում է, որ դրանք շատ պոզիտիվ դրական են: Մի՞թե չգիտի, որ «պոզիտիվ» հայերեն նշանակում է դրական: Ստացվում է, որ դրանք դրական դրական են:

Մի այլ գովազդային պաստառին պատկերված են մարդկային դեմքեր (ի միջի այլոց նման պաստառներից մեկում մեր լավագույն ֆուտբոլիստ Հ. Մխիթարյանի ոչ ուրախ դեմքն էր նաև) և գրված է՝ «Դիմակայում են ճնշմանը»: Բայց ի՞նչ ճնշման: Մարդիկ մտածում են, որ իհարկե դիմակայում են իշխանությունների ճնշմանը: Ակնկալենք, որ նոր իշխանությունների ճնշումը համեմատաբար քիչ զգալի կլինի:

Վերին «էլիտան» շատ է օգտագործում «աղեքված» բառը: Բառարանից տեղեկանում ենք՝

адекватно - համապատասխանորեն, նույնականորեն

адекватный - լիովին համապատասխան, նույնական

адекватность - համապատասխանություն, նույնականություն:

Սովորաբար խոսակցական լեզվում հայերը դեմ են շարտում ռուսերեն բառերի վերջավորությունները և ավելացնում իրենց, որի հետևանքով ստեղծվում է, ինչպես ժողովուրդն է ասում, շիւա-շփոք:

Հաճախ ենք լսում նաև «традиция» բառը իր վերջերանգներով (մեր տրադիցիան, մենք տրադիցիոն ժողովուրդ ենք և այլն):

традиция - 1. սովորույթ, ավանդույթ, ավանդավարք, 2. սովորություն, սովորույթ, կարգ, 3. ավանդականություն:

Տարբեր մակարդակներում կարծեք թե լրիվ հայտնվել են ռուսերեն «фиксация», «фиксировать» բառերը և աջ ու ձախ լսում ենք «ֆիքսելի» հայերեն հոլովածները: Հայ-ռուսերեն պոլիտեխնիկական բառարանում (1988 թ.) կարդում ենք՝

фиксация (фиксирование)-1. սևեռ(ակ)ում, 2. արձանագրում:

Ա. Ղարիբյանի բառարանում կարդում ենք՝

фиксация տե՛ս фиксирование - արձանագրում, արձանագրելը, հաստում, հաստելը, նշում, նշելը, սահմանում, սահմանել, որոշում, որոշելը, սևեռում, սևեռելը, նշանակում, նշանակելը, սևեռական, սևեռակայելը:

фиксировать - 1. արձանագրել, նշել, հաստատել, հաստատագրել, 2. վերջնականապես որոշել՝ սահմանել, նշանակել, 3. սևեռել, կենտրոնացնել, 4. սևեռակել, 5. ամրացնել, ամրապնդել:

Փաստորեն ունենք հայերեն բառերի հզոր բանակ, որը կարելի է օգտագործել ըստ նշանակության, որից բոլորովին չեն նեղանա օտար լեզուների մասնագետները կամ օտարազգիները:

Վերը բերված մի քանի բառերից էլ երևում է, որ մեր լեզուն շատ հարուստ է (սա իմ միտքը չէ, սա հանրահայտ է), և օտար բառը հայերենում կարող է ունենալ իրավիճակին բավարարող կամ մտքին համապատասխանող անհրաժեշտ տարբերակը:

Ցավալի է, որ մասնագիտական բարձրագույն կրթություն և հայեցի դաստիարակություն ստացած անձինք աղավաղում են և աղբատաքում մայրենի լեզուն: Ամբողջական է, որ «մոտիվացիա» բա-

➤7

Գիտնականը հարց է բարձրացնում

ԻՆՁ ԵՎ ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ԳՈՎԱԶԴՈՒՄ

սիք են, օրինակ, «Աղբի տեղը աղբանում է», «Աղբը չթափել» (ես էլ միամտորեն թարգմանում էի նաև դրանք) և նման բովանդակությամբ հաճախակի հանդիպող և համրակցությունով մեկ սփռված գովազդները: Նրանք չկարողացան թաքցնել իրենց պարուրած մշուշը՝ մի՞թե հազարամյակների մշակույթ ունեցող ժողովրդին պետք է նման շքեղ գովազդային պաստառներով հիշեցնել այն, ինչ պետք է իմանա յուրաքանչյուր շատ թե քիչ կիրթ մարդ: Եվ ավելացրին, որ դա հարիր չէ հայ ժողովրդին:

Պետք է լավ գիտակցել, որ գովազդը միաժամանակ նաև այցեքարտ է մեր երկիր այցելող յուրաքանչյուր հյուրի համար: Այն, որ տունդ ու տեղդ, քո բակը, քո երկիրը պետք է պահես մաքուր, չապականես և չփչացնես բնությունը, պետք է մուտքագրվի մարդու մեջ իր ծնողներից, մանկապարտեզից և դպրոցից, պետք է լինեն մատաղ սերնդի դաստիարակության հիմնական կռվամներից: Բոլորս էլ գիտենք, որ աղբ չթափելու կամ միջավայրը մաքուր պահելու հետ կապված երեխայի դիտողությունը կամ հորդորը ավելի մեծ ազդեցություն կարող են ունենալ, քան գովազդային պաստառները: Անհրաժեշտ է, որ մախադարոցական և դպրոցական հասակի երեխայի գիտակցության մեջ սերմանվի այդ գաղափարը, որը նրանց կուղեկցի ամբողջ կյանքում:

Որոշ օտարների մոտ այն կարծիքն է ստեղծվել, որ հայերը սիրում են իրենց տունն ու տեղը կոկիկ պահել, բայց շենից դուրս՝ անտարբեր են: Ես մի քանի անգամ բարձվել եմ այս կարծիքին և ինձ համար շատ ցավալի է, որ որևէ օտարերկրացի մեր մասին կարող է նման հետևության հանգել:

Ամեն առավոտ աշխատանքի գնալիս ակամատես եմ լինում, թե ինչպես դեղին արտահայտանավորները հավաքում են ճանապարհի երկու կողմերի աղբը, որը թափվել, չարտվել է ճանապարհով սլացող մեքենաներից: Այ քեզ մակարդակ...

Եվ այսպես ամբողջ հանրապետությունում: Դե հաշվեք, թե ինչքան մարդկային էներգիա և ֆինանսային միջոցներ են ծախսվում մեր տգիտության կամ անշնորհքության հետևանքը վերացնելու համար:

Վերջերս եղել եմ «Դալմա մոլ» առևտրի կենտրոնի մոտակայքի շենքում: Այս «մոլ» բառը որտեղից էլ եկել է: Այն մույնպես հայտնվել է գովազդային պաստառների վրա: Հարցրեք ցանկացած մարդու, թե ի՞նչ է նշանակում «մոլ» բառը, ես հավատացած եմ, որ շատ քչերը կիմանան (այն էլ միայն անգլերեն իմացողները), բայց ընդհանուր պատասխանը կլինի առևտրի

քի շրջապատն է: Այս աղբավայրի անմիջական հարևանությամբ գտնվում է գեղեցկատես հյուրանոց, և պատկերացրեք, թե այդտեղ հյուրընկալվողը ինչպիսի տպավորություն է տանում իր հետ:

Ցավով սրտի, սա եզակի դեպք չէ, և եթե պատվեք Երևանում (և ոչ միայն Երևանում), ապա նման «տեսարժան» վայրերի շատ կհանդիպեք: Եվ զարմանալի է, որ մենք մեծ շփում ունենալով արտերկրների՝ թեկուզ մեր ազգակիցների հետ, շրջապատի մաքրության հետ կապված նրանց մոտեցումները չեն ներդրում մեր հոգու մեջ: Ընկերս պատմում է, որ օդանավակայանում ԱՄՆ-ից եկող քրոջ տղային դիմավորելիս վերջինս հարցնում է, թե արդյոք կարելի՞ է ծխել: Ընկերս պատմում է, որ չի կարելի, բայց եթե շատ ես ցանկանում, կարող ես ծխել: Տղան հարցնում է՝ չե՞մ տուգանի և ավելացնում, որ դրա համար ԱՄՆ-ում շատ մեծ տուգանքներ կարող են վճարել: Այո՛, անհրաժեշտ է պետական խիստ մոտեցում, հետևողական պետական քաղաքականություն, և դա պետք է լինի ոչ թե թղթի վրա, այլ իրական և իրավական դաշտում: Անհրաժեշտ է մեծ ծավալի քարոզչական ու բացատրական աշխատանք կատարել ազգաբնակչության շրջանում, հատկապես կարևոր է պարզ ու հասկանալի տեղեկանքներով տալ միջավայրը կեղտոտելու հետևանքների մասին: Դրան պետք է օգնի նաև դպրոցում «Բնագիտություն» առարկայի համապատասխան բաժինը՝ կապված շրջակա միջավայրի հետ: Ավտոդպրոցներում ապագա վարորդների պետք է բացատրվի շրջապատը մաքուր պահելու խնդրի էությունը: Ընդ որում, աղբամաններ պետք է լինեն ոչ միայն բնակավայրերում, այլ նաև ճանապարհների այն հատվածներում, որտեղ հաճախ կանգ են առնում ուղևորատար մեքենաները: Համազատ գոտիներում մույնպես պարտադիր պետք է լինեն աղբամաններ: Եթե զարգանա զբոսաշրջությունը, ապա սպասարկման որակի բարձրացման հետ անհրաժեշտ է նաև մաքուր պահել մեր ունեցած այս մի փոքր հողակտորը:

Ես չեմ արժարժում աղբահանության և մախաբեթ ծխաթղթի սփռող աղբանոցների (աղբավայրերի) խնդիրները, չնայած սրանք մույնպես շատ կարևոր են մեր այս փոքր տան համար:

Նորից անդրադառնամք գովազդային պաստառներին: Ահա պաստառներից մեկն էլ պահանջում է՝ ազդարարի, կոռուպցիան դա աղբատություն է, վերադառնա՛: Ռուս-հայերեն բառարանից (Ա. Ղարիբյան) իմանում ենք, որ «коррупция» նշանակում է կաշառակերություն, որը շատ ավելի հասկանալի է, բայց թե ինչու է գործածվում «կոռուպցիա» բառը, ինձ պարզ չէ: Գուցե

մակարդակով ստեղծվել էր կաշառակերության դեմ պայքարի հանձնաժողով: Եվ ովքեր էին այդ հանձնաժողովում: Մեծամասամբ այնպիսի անձինք, ովքեր հանրությունում հայտնի էին որպես կաշառակերության շքեղ զգեստներ կրողներ: Չգիտես՝ ծիծաղես, թե լաւ...

Մի այլ պաստառից տեղեկանում ենք «Մայիսի 5-ը հարկադիր կատարողի օր»: Խորհրդային տարիներին մենք գիտենք, որ մայիսի 5-ը մամուլի օրն է, և դա նշվում էր, քանի որ շատ մեծ էր մամուլի դերն ու նշանակությունը հասարակության զարգացման գործընթացում: Ես չեմ ցանկանա թեկուզ իմ նկատմամբ վատ տրամադրված որևէ մեկը հայտնվի այնպիսի իրավիճակում, որ ստիպված արժանանա հարկադիր կատարողի ուշադրությանը:

Վերջին ժամանակները Չարենցի փողոցում (գուցե և այլուր) հայտնվել էր մի գովազդային պաստառ՝ կնոջ բարեկամ պատկերով և հետևյալ գրությամբ՝ «Ձեր մոտիվացիան»: Ես անցորդների ուշադրությունը հրավիրեցի այդ գովազդին՝ խնդրելով բացատրել, թե դա ինչ է նշանակում: Ոչ ոք չգիտեր, թե ինչ է նշանակում «մոտիվացիա» բառը, որպեսզի հասկանալի գովազդի էությունը: Ցավալիս այն է, որ մի շարք օտարամուլ բառեր մուտք են գործել ոչ միայն հեռուստատեսությամբ, այլ նաև մամուլ ու ազգային ժողով ու մեծ լրջությամբ ու շուքով գովազդվում են: Բայց հետաքրքիր է, այդ բառերի իմաստը հասկանում են, թե պարզապես «իմիջ» ստեղծելու համար են օգտագործում: Դիմենք Ա. Ղարիբյանի Ռուս-հայերեն բառարանին՝ պարզելու համար դրանց հայեցի նշանակությունը: Օրինակ՝

мотив - 1. պատճառ, դրդապատճառ, շարժառիթ, 2. պատճառաբանություն, փաստարկ, հիմնավորում:

мотивация, мотивировка - 1. պատճառաբանում, պատճառաբանելը, փաստարկում, փաստարկելը, հիմնավորում, հիմնավորել, 2. պատճառաբանություն, հիմնավորումը:

консолидация - համախմբում


компромисс - փոխզիջում

Տարբեր մակարդակներում շատ է օգտագործվում հետևապես և գովազդվում «элита» բառը հայերեն հնչեղանգներով, օրինակ՝ «էլիտար»: Բառարանում կարդում ենք՝

элита- ընտիր տեսակ, ընտրատեսակ, ընտրախավ, ընտիր հասարակություն

элитный – ընտրատեսակ, ընտիր, լավագույն

«Элитный» բառը հայերենում արտասանում են «элитар», օրինակ, «էլիտար» շենք և այլն: Թվում է, թե հայերեն իմաստները չեն օգտագործվում, որովհետև չեն



Շայրենիքի կորստի թեման Վահագն Դավթյանի պոեզիայում

Հայոց պատմական հայրենիքի կորուստը խոր ու տարողունակ ակուններ բացեց հայ գրականության էջերում: Աշխարհում քիչ ժողովուրդներ կան, որոնց հայրենիքը ցեղասպանության միջոցով զավթվել, խլվել է իրենց տերերից: Այն էլ մեր ժամանակներում, երբ թվում էր, թե մարդկությունը հրաժարվել է բարբարոսությունից և առավել քաղաքակիրթ ընթացք է որդեգրել: Եթե հնագույն ժամանակներում մարդկային քաղաքակրթությանը այնքան մեծագույն նպաստ բերած շումերներն ու աքքադացիները Պ. Սևակի դիպուկ բնութագրությամբ՝ «կորան իրենց իսկ հողերի վրա, որովհետև ինչպես մարդիկ, այնպես էլ ժողովուրդները գոյատևում են «ոչ միայն հացիվ», այլ նաև «բանիվ»»: Հողից ու հայրենի տնից զրկված հայ ժողովուրդը չկորավ, քանի որ ուժերի գերազույն լարումով մաքառեց բանիվ՝ շնորհիվ Մաշտոցի պարզևած հզոր գեների՝ հայոց այբուբենի:

Հայոց մեծ եղեռնը այնքան ու այնպիսի բազմաշերտ ու բազմաժառանգ երևույթ է, որ նրա թողած տխուր և վշտալից հետագիծը հայ ժողովուրդի հավաքական հիշողության ու հոգեբանության վրա անպարագիծ է, անվերծանելի:

Եղեռնը ծանր, բազմաճյուղավոր ողբերգություն է, հարատևող բերդություն: Եղեռնի թողած ցավն ու ցավի գագաթնակները թերևս անվերծանելի է:

Եվ լոկ մեծ ու հզոր տաղանդի տեր բանաստեղծները կարող էին իրենց հոգու պրիզմայով անցկացնել վերոնշյալ վշտի ու ցավի ողջ բովանդակ քաղաքականությանը և գոնե փոքր-ինչ համարժեք արձագանք տալ գեղարվեստական պատկերներով:

Այդ բանաստեղծների շարքում ա-

ռանձնանում է մեծատաղանդ արաբկիր-ցի բանաստեղծ Վահագն Դավթյանը, որը եղեռնագարկ եղած ժողովրդի հոգևոր ու ֆիզիկական մի մասնիկն էր:

Խորն է Վահագն Դավթյանի հայ բանաստեղծի ապրած հոգեկան անհատնում դրաման:

Վահագն Դավթյանի Հայրենի օրանը՝ սքանչելի գյուղաքաղաք Արաբկիրը մնաց սահմանի այն կողմում, կորուսյալ Արևմտյան Հայաստանի խորքերում, օտար ու բիրտ լծի ներքո:

Իր գիտակցական համակ կյանքի ընթացքում նա՝ հայ բանաստեղծ Վահագն Դավթյանը հոգեկան սրտուռ ելևէջներով դողաց ծննդավայրի կորստյան համար: 1987 թվականին, Երևանում «Լույս»

հրատարակչության կողմից հրապարակված «Ծննդավայր» («Моя малая родина») երկվեզվյա նկարագրող, շքեղ հատորյակը բացվում է հենց «Ծննդավայր» խորագրված խորունկ բանաստեղծությամբ.

Առաջին անգամ աշխարհում տեսած
Իմ առավոտն է այնտեղ մնացել,
Նա, որ բուրում էր իբրև ցորեն հաց
Եվ բուրում էր գարնան հող ու ցել...

Առաջին անգամ աշխարհում տեսած
Իմ առավոտն է այնտեղ մնացել,
Երկինք ու բարդի, ճառագայթ ու լաց,
Իմ հողի հոտն է այնտեղ մնացել...

Սույն գրքի և համանուն բանաստեղծական շարքի բոլոր գործերի համար որպես խորհրդանիշ ու բնաբան կարող է ծառայել XX դարի լիտվացի նշանավոր բանաստեղծ, Լիտվայի ժողովրդական բանաստեղծ Էդուարդաս Մեժելայտիսի հետևյալ խորունկ բնութագրումը. «Ինձ թվում է, թե Վահագն Դավթյանն իր բանաստեղծություններն այնպես նրբորեն ու հմտորեն է քանդակում, ինչպես հայկական հին վարպետներն էին քանդակում խաչքարերը»:

Թերթենք «Ծննդավայր» հրաշք հատորյակի էջերը: Կարծես ողջ Արևմտյան Հայաստանն է իր բնության ծայրով խոսում մեզ հետ: Կորուսյալ անդարձ թվացող երկիրը նորից զարթնում է մեր հոգիներում: Հողի կանչն է սուրում դեպի մեզ, գրկում մեզ ու տանում դեպի մեր պապերի հազարամյա հայրենիք:

Վ. Դավթյանի պոեզիան կառուցված է գեղարվեստական բարձրարժեք պատ-

կերներով, հունցված սրբազան ու սրբադերս հոգեմյուսով:

Ո՞վ է հեռվից, դարերի ու հազարամյակների հեռավորությունից ծայրում, դողանջում մեզ: Դա անլսելի զնգոցն է քարի, շշուկը հողի, թե՛ սոսափյունը Սոսյաց անտառի:

Ու ես չգիտեմ, անդհուում կորած Գետն է տվալտող, Թե՛ հին խաչքարից ինձ ծայն է տալիս Մամռոտած մի տող:

Կամ գուցե, գուցե դարեր առաջ
Ինձանից զատված
Իմ իսկ դողանջն է, որ ետ է դառնում
Մաքուր ու զտված:
Այդ կանչերի մեջ մի կորած, հեռու
Աշխարհ է լալիս

Ու ես ասում եմ. - կանգնիր, - առավոտ, ես էլ եմ զալիս:

Ինչպես մեր գրականության մյուս մեծերը՝ Մուշեղ Գալշոյանն ու Խաչիկ Դաշտենցը, Հովհաննես Շիրազն ու Սիլվա Կապուտիկյանը, Վահագն Դավթյանը նույնպես միշտ ու մշտապես հոգեկան երկխոսության մեջ լինելով պատմական հայրենիքի սուրբ մասունքների հետ, ամեն օր հոգու և մտքի բոլոր նյարդերով թռչում էր դեպի հայրենական օջախներ, դեպի հարազատ Էրզիր: Նրա մանկության, պատանեկության և հասուն կյանքի բոլոր ցերեկներն ու գիշերները լցված էին սիրատուն Էրզրի խորհրդանիշ պատկերներով, լուսաբացների ու կիսավեր վանքերի, եկեղեցիների, մատուռների զանգերով ու կանչերով:

Կորուսյալ հայրենի տան ու երկրի կարոտը մշտապես քրքրել է նրա հոգին, բարկ պահել հոգեկան լարվածությունն ու դրամատիզմը:

«Ամպել էին» բանաստեղծության մեջ հոգու դողն ու դրամատիզմը ընդունում են անսովոր չափումներ. Ամպել էին, մթնել էին
Դեմի լեռները,
Պարան-պարան կապում էին,
Ա՛խ, մեր բեռները:

Կապում էին աման-չաման
Ու հին կարպետը,
Թողնում էին մեր թթենին
Մեր տունն ու գետը:
Կապում էին վերմակ ու բարձ
Ու հին պղինձը,
Թողնում էին ոսկե առուն,
Մեր դաղձն ու սինձը:
Դարում էին, կապում էին

Մեր ճամփի հացը,
Թփերի տակ թողնում էին
Ծիծաղս ու լացս:

Մեծ եղեռնի ու հայրենի օջախի կորստյան թեման նրա պոեզիայում բորբոք մնաց մինչև իր կյանքի վերջին ակնթարթը: Նա ուղեղի ու արյան բոլոր գնդիկներով կրում էր կորուսյալ Արևմտահայաստանի լուսավոր պատկերը և այն իր բանաստեղծությունների էներգետիկ դաշտով իր հայրենակիցներին և աշխարհի մյուս մարդկանց փոխանցում հողի և հայրենի տան կորստի կսկիծն ու տագնապը: Նրա բանաստեղծական աշխարհում հայրենի տան կարոտը նրբորեն հայտնվում է նաև շան խղճալի կերպարով, այն շան, որը հայտնվել էր հայրենի օջախի և այդ օջախը ստիպված թողնող հայ մարդու, հայ տիրոջ արանքում.

Շունը կլանչում,
Շենք թողնում էր,
Փաթաթվում տատիս,
Տխուր ոռնում էր
Մերք վազում էր դեպի
Մեր քարավանը,
Մերք ետ էր դառնում,
Պառնում դռանը:

Հարցում էր անում,
Ասես, մեր շունը,
Թե թողնի արդյոք
Այգին ու տունը:

Այս ամենը հազվագյուտ գոլորտիկ գեղարվեստական պատկերներ և զգացողություններ են ոչ միայն հայ, այլև համաշխարհային գրականության էջերում: Վահագն Դավթյան հայ բանաստեղծը հավատում էր իր ժողովրդի ոգու անշեշ կրակին: Նա մեկ հայի հորդգոնից գնաց դեպի աշխարհասփյուռ հայության հորիզոնը:

Դիպուկ և ճշմարիտ դիտարկում է արել բանաստեղծ Հարություն Հովսեփյանը, նշելով, որ «ինքնամփոփ էր Վահագն Դավթյան մարդը, բայց ինքնամփոփ չէր Վահագն Դավթյան բանաստեղծը, այստեղ նա, եթե կարելի է այսպես ասել, ազգամփոփ էր, ազգի ճակատագիր էր, ազգի զավակ էր, անցյալի, ներկայի ու նաև ապագայի տագնապները կրող անհամագիստ ու տառապյալ հոգի» («Նոր դար», Ե., 2002 թ., էջ9):

Վ. Դավթյանը հեռացավ այս աշխարհից այն հույսով ու հավատով, որ հայը նորից կվերադառնա իր վաղնջական բնօրրանը և վերստին կինչի հայոց բառն ու բանը նաև հիմնավորը Արաբկիրում, Ոսկեգետնակի զմայլելի ափերին:

Արմեն ԿԱՐԼՊԵՏՅԱՆ
Պատմաբան, հրապարակագիր

ԻՆՉ ԵՎ ԻՆՉՊԵՍ ...

➤ Եղ (և ոչ միայն դա) օգտագործում են նաև հանրապետության ղեկավար առաջին դեմքերը, դրանով խթանելով նման բառերի երթը հայկական միջավայր: Ես հարգում եմ պ-ն Պետրոս Դադարյանին իր հետաքրքիր և արդիական հատրդումների համար: Բայց երբ հեռուստակրանից հնչեցնում է «մոտիվացիա» բառը, կարծեք թե իր թույն արտամետոդ ծխամորժով (որն էությամբ ավելի վտանգավոր է, քան դատավորի մուրճը) հարվածում է գլխիս: Դե արի ու դիմացիր:

Հիշեցնեմ մի դեպք՝ կապված մեր անգուցական վարպետ Ա. Իսահակյանի հետ: 1950-ական թվականներին նա այցելել էր Տաթևի վանք և անչափ հիացած ժայռի գլխին թառած կառույցի ճարտարապետությամբ և բնության անկրկնելի գեղեցկություններով լսում էր վանքի հետ կապված բացատրությունները, որը տալիս էր Թևադորոս Մարգարյանը, ով գրագետ անձնավորություն էր և լավ գիտեր մեր ժողովրդի պատմությունը: Սակայն հաճախ

էր օգտագործում ռուսերեն բառեր, որը Բաքվում նրա աշխատելու շրջանի ազդեցությունն էր: Վարպետը չհամբերեց և ասաց. - Երևում է կիրթ մարդ ես, բայց մենք ստանվում ենք հայոց վանքում, բոլորս էլ հայեր ենք, ինչի՞ համար եմ այդ ռուսերեն բառերը,- և ավելացրեց,- ռուսերեն իմանալը, և ոչ միայն ռուսերեն, լավ է, ես կասեի ամիրաժեշտ, բայց դրա կարիքը չկա այստեղ:

Իմաստուն Վարպետ, մի պահ հայտնվիր մեր իրականության մեջ և տես, թե օտար բառերը ինչպես են նետահարում հայոց լեզուն:

Ես այս հարցի շուրջ շատ եմ խոսել տարբեր մակարդակներում, և գրեթե միշտ էլ դրա ջատագովները իրենց արդարացնելու համար ասում են, որ մեր ժողովուրդը պետք է տիրապետի գործածական ռուսերեն և այլ օտար բառերին: Սրա պատասխանը տվել է մեծ վարպետը Տաթևի վանքում: Եվ ցավալի է, որ նմանները լավ չեն տիրապետում հայերենին և ստիպված դիմում են այլ լեզուն-

ների օգնությանը: Իհարկե, կա նաև երկրորդ «պատճառիկը», որի մասին խոսել ենք, դա «իմիջի» ստեղծումն է:

Մոսկվայում՝ ակադեմիկական ինստիտուտներից մեկում, աշխատում է միջազգային ճանաչում ունեցող տաղանդաշատ գիտնական, քիմիկոս Վիլեն Ազատյանը, ով տիրապետում է մի քանի օտար լեզուների (նա միշտ ընդգծել է, որ իր մայրենին հայերենն է, չնայած ունի ռուսական կրթություն): Մեր հանրապետությունում հայերեն լեզվով վերլուծի ժամանակ օգտագործում է միայն հայերեն բառեր և տերմիններ, որը զարմանք և հիացմունք է առաջացնում: Այո, նա Մեծ հայ է, և նրա նմաններն են պահպանում ու զարգացնում մեր մայրենի լեզուն:

Հիշում եմ, 1970-ական թվականներին Երևանի պետական համալսարանում կազմակերպվել էր հանդիպում Մարտիրոս Սարյանի հետ: Հանձարեղ նկարիչը իր շնորհակալական խոսքն ավարտեց հետևյալ մտքով. «Մեր ազգը պահպանո-

ղը եղել է մեր լեզուն, անաղարտ պահե՛ք այն»:

Սա պատգամ է՝ ուղղված ցանկացած հայորդու, անկախ այն բանից, թե որտեղ է նա և ինչ պաշտոնի:

Վերջին տարիներին գովազդային պատամենքերին կարողում ենք Աստծո հետ կապված մտքեր և ավետարանական դրույթեր (դոգմաներ): Ի սեր Աստծու, մեր երկրային խնդիրներին մի խառնեք Աստծուն:

Իմ կարծիքով, լավ կլինի, եթե «Ձերբա» գովազդային գործակալությունը գովազդներում ընդգրկի նաև միջազգայնորեն ճանաչված մեր տաղանդաշատ գիտնականներին: Շիշտ է, այսօր գովազդային պատամենքում պատկերված են այդ գիտնականներից մի քանիսը, սակայն դա բավարար լինելուց շատ հեռու է:

Քայլ է արված հանրապետությունը մաքրելու հասարակական աղբից, բայց անհրաժեշտ է քայլ անել նաև մեր երկրի մաքրելու կենցաղային աղբից և հայոց լեզուն պաշտպանել օտարաձիգ նետերից:

Ռոմիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Վրթանես Փափազյանի նամակը Հայաստանի Առաջին Հանրապետության կառավարությանը



նի խորհրդարանի անդամների հոգու մեջ ևս հարուցանում է կսկծալի հուշեր և մորմոք: Դուք ևս, ամենքդ, մեզ - հայ գրողներիս պես զգում եք վշտի խորությունը, երբ պահ մի աչքի առջև եք բերում, թե ովքեր կորան այդ անիծյալ օրերում և ինչպիսի կյանքեր հնձվեցին:

Դուք ևս, անշուշտ, կսկիծով համակվում եք, երբ ապրիլ 11-ի, 12-ի և 13-ի օրերին հիշում եք Ձևիրապի,



Չեմ կարծում, որ մոռացված լինեն 1915 թվի 11, 12 և 13-ի (նոր տոմարով՝ 24, 25 և 26) այն օրերը, երբ Կ. Պոլսի և Հայաստանի բոլոր գավառներում, նախապես ծրագրված դիվային մի մտածությունով, թուրք կառավարությունը խմբովին ձերբակալեց հայրուրավոր հայ մտավորականների, տանջեց նրանց բանտից բանտ և աքսորների ճանապարհներին, հետո զազանորեն մորթել տվավ և անհայտության մատնեց նրանց գերեզմաններն անգամ:

Ովքեր ասես, որ չկային այդ նահատակների մեջ: Հայ բանաստեղծ ու լրագրող, բժիշկ ու փաստաբան, հայ ուսուցիչ, եպիսկոպոս, վարդապետ ու քահանա... ամենքին, ամենքին տարան, ոչինչ չխնայեցին, հայ միտքն ու զեղծին մի հարվածով մեռցնել ու ոչնչացնել, ուզեցին ջնջել հայ գիրքը, հայ երգն ու հայ աղոթքը...

Գաղափար կազմելու համար կորստի ահավորության մասին, բավական է հիշատակել, որ սպանվեցին ու մորթվեցին մոտ 760 մտավորականներ:

Յոթ հարյուր և վաթսու և կյանքեր, որոնք այնքան ոգևորությամբ մշակում էին հայ միտքը, և որոնց ջնջելով՝ իրավամբ մտածում էին, թե հայ ազգը պիտի կորցնի իր ամենալավ մասը - իր սիրտը, իր կուլտուրան:

Յոթ հարյուր և վաթսու և նահատակներ, որոնք ընկան, մեր ազատության ուղիների վրա՝ պատվանդան դառնալով մեր այժմյան փորձի, վտիտ անկախության համար, որ պիտի մեծանա, անշուշտ և լավ օրերի մեջ հիացունով հիշե պիտի իր 760 լավագույն մտավոր ուժերին:

Մեր պատմության մեջ մենք չենք ունեցել նման նահատակներ՝ այդպես խմբովին սրի զոհ գնացած և վայրագորեն ոչնչացրած 1915, ապրիլ 11, 12 և 13 թվեր՝ մեր անցյալի արյունոտ էջերը չունեն արձանագրած իրենց վրա: Յոթ հարյուր և վաթսու և լուսավոր մտքեր միահամուռ ժողոված և անապատների մեջ մորթուած-լենկթեմուրյան շրջանում անգամ տեղի չի ունեցել:

Մենք այդ անմախքնաբար սոսկումի օրերը ապրեցինք, և նրա կսկիծը դեռ մեր սրտերում ունենք դառնորեն: Լայնատարած նախնիների մեջ՝ խորունկ վշտով է, որ մտաբերում ենք 760 նահատակների անփոխարինելի կորուստը...

Այդ ամենը գիտեմ, որ Հայաստա-

Վարուժանի, Սիամանթոյի, Ջարդարյանի և այլոց դաժան մահը, երբ մտաբերում եք մեր լավագույն հեղափոխականներից Վարդգեսի, Խաժակի, Շահիրկյանի և շատ ուրիշների կորուստը:

Ու մտաբերելով կսկիծը ձեր հոգիների մեջ, անշուշտ, դուք, ես հույս ունեմ, չեք մոռանալ հիշեցնելու ամբողջ Հայաստանի ժողովրդին և ամեն տեղերի հայերին, թե ինչպիսի կսկծալից սգո օրեր են ապրիլ 11-ի, 12-ի, 13-ի օրերը, և թե ինչպես այդ օրերից մեկ օրը գոնե, անհրաժեշտ է, որ ՍԳՈ ՕՐ դառնա ամբողջ հայ ազգի համար այնպես, ինչպես դարերից ի վեր դարձել է ՎԱՐԴԱՆԱՆՑ ՕՐԸ:

Թույլ տվեք ինձ ուրեմն, հայ ազգի ներկայացուցիչներ, խոնարհաբար անել ձեզ հետևյալ առաջարկները, քաջ գիտեմալով, որ դուք պիտի ըստ ամենայնի քաջալերեք նրանց և առաջադրեք գործադրելու:

1. Ապրիլի 12-ի կամ 13-ի օրը հռչակել ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՍԳԻ ՕՐ, կանգ առնել տալ ամեն հաստատություն իր գործունեության մեջ, փակել բոլոր խանութները և կազմակերպել տալ ամեն տեղ, մանավանդ կրթական հաստատությունների մեջ՝ սգահանոթյուններ, ուր մատաղ սերունդը լսի և խմանա, թե ինչպիսի զոհերի գնով է, որ վայելում է այժմյան իր ազատությունը, և ովքեր են այն նահատակները, որոնք իրենց վարդագույն արյունովը պսակեցին մեր անկախությունը:

2. Օրինագիծ մտցնել Պառլամենտում՝ ամեն տարի որոշ օր նշելու մեր այդ նահատակների հիշատակը և առաջարկել Վեհափառ կաթողիկոսին, որ հայ բոլոր եկեղեցիներում հոգեհանգիստներ կատարվեն, իսկ օրացույցի մեջ Ապրիլի 12-ի օրը նշանակվի իբր մշտական սգո օր՝ «Հիշատակ հայ նահատակների, որոնք ընկան համաշխարհային մեծ պատերազմի օրերին՝ թուրքական վայրագ սրից»:

Մեծահույս եմ, որ Հայաստանի Պառլամենտը կատարելապես իր սրտին և զգացմունքներին համապատասխան գտնելով իմ այդ առաջարկները, կանի պատշաճ տնօրինությունը վաղօրոք՝ ի գիտություն ամենքի:

Ամենայն հարգանք՝ հայ գրող ՎՐԹԱՆԵՍ ՓԱՓԱԶՅԱՆ
1920 թ. ապրիլի 3

Անի (Անահիտ) Նշանի ՀԱՆԵՅԱՆ

Երկարատև ծանր հիվանդությունից հետո վախճանվեց ճանաչված բարբառագետ, բանասիրական գիտությունների թեկնածու Անի (Անահիտ) Նշանի Հանեյանը:

Ա. Հանեյանը ծնվել է 1941 թվականի մարտի 3-ին Երուսաղեմում՝ Մեծ եղեռնից փրկված և Պաղեստինում հաստատված քեսաբցիների ընտանիքում: 1947 թվականին նրանց ընտանիքը հայրենադարձվել և հաստատվել է Երևանում, որտեղ Ա. Հանեյանը ավարտել է միջնակարգը և Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը:

Ա. Հանեյանի ողջ մասնագիտական գործունեությունը կապված է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հետ, որտեղ նա եղել է ասպիրանտ, պաշտպանել ատենախոսություն և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, երկար տարիներ աշխատել որպես գիտաշխատող, ավագ գիտաշխատող և բարբառագիտության բաժնի վարիչ: Հայ մտավորականի, սկզբունքային ու անաչառ գիտնականի իր կոչմանը նա հավատարիմ է եղել ողջ կյանքի ընթացքում:

Մեծ է Ա. Հանեյանի ավանդը հայ բարբառագիտության զարգացման գործում: Հեղինակ է Տիգրանակերտի և Եղեսիայի բարբառներին նվիրված ծավալուն մենագրությունների, «Ձայնեղ շնչեղները հայերենի բարբառներում», «Գրաբարի բառասկզբի յ-ծայնորդի արտացոլումը արդի հայերենի բարբառներում» հիմնարար աշխատանքների, հայերենի բարբառների բառապաշարի տարբեր իմաստային շերտերին նվիրված բազմաթիվ գիտական հոդվածների: Մասնակցել է նաև «Հայերենի բարբառագիտական ատլասի» նյութերի հավաքման ծրագրի ստեղծման աշխատանքներին: Ա. Հանեյանի ներդրումը մեծ է նաև հայերենի հնչատարբերակների տառադարձման նոր համակարգի մշակման գործում:

Վաստակաշատ գիտնական Ա. Հանեյանը իր հայրենիքին, նրա մշակութային արժեքներին հոգու ամենանվիրական թելերով կապված մտավորական էր, որի հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների սրտերում:

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ ինստիտուտի արդի հայերենի բաժնի վարիչի թափուր տեղի համար

Դիմողները պետք է ունենան գիտական աստիճան, տվյալ ոլորտում գիտական վաստակ, գիտակազմակերպչական աշխատանքի փորձ:

Անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- ա) դիմում,
- բ) լուսանկար,
- գ) քաղվածք աշխատանքային գրքույկից,
- դ) ինքնակենսագրություն,
- ե) բարձրագույն կրթության դիպլոմի պատճեն,
- զ) գիտական աստիճանը հաստատող դիպլոմի (դիպլոմների) պատճեն,

է) կադրերի հաշվառման անձնական թերթիկ, ը) տեղեկանք մշտական բնակության վայրից,

թ) հրատարակված աշխատանքների ցանկ,

ժ) գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրա առկայության դեպքում), Ճա) բնութագիր վերջին աշխատավայրից:

Փաստաթղթերը պետք է ներկայացնել մեկ ամսվա ընթացքում (հայտարարությունը հրապարակելու օրվանից) հետևյալ հասցեով՝ Երևան, Գր. Լուսավորիչ 15, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ (գիտական քարտուղարին), հեռ. 060-62-35-77:

ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամը 2019 թ. հայտարարում է հայագիտական ուսումնասիրությունների նախագծերի մրցույթ, որոնք պետք է նպատակաուղղված լինեն հայագիտության բնագավառում կարևոր, արդիական հնչեղություն ունեցող խնդիրների լուծմանը:

Առաջարկվում է առավել ուշադրություն դարձնել հայագիտության հետևյալ ուղղություններին.

- ա) 21-րդ դարի հայագիտության մարտահրավերները,
- բ) Ցեղասպանության հետևանքների հաղթահարման խնդիրներ՝ «Ճանաչումից հատուցում» հայեցակարգի շրջանակներում,
- գ) Արտասահմանում գտնվող հայագիտական աղբյուրագիտական ժառանգության ուսումնասիրության հիմնախնդիրներ,
- դ) Արցախի պատմական անցյալի հետազոտման և մշակութային արժեքների պահպանման գերակայությունները,
- ե) Հայոց պետականության զարգացման արդի փուլը, պատմական դասերը և հեռանկարները:

ՀՈՒՖՀՀ հիմնադրամին ներկայացված ծրագրերի կատարման համար տրվում է 1 տարի ժամանակ:

Ներկայացվող ծրագրերում պետք է առանձնացվեն փուլեր՝ նշելով դրանց իրականացման ժամկետներն ու առաջադրանքները, ֆինանսավորման ծավալները՝ համապատասխան հաշվարկներով ու հիմնավորումներով:

Նախագիծը կարող են իրականացնել ինչպես մեկ գիտական խումբ՝ իր ղեկավարով և աշխատակիցներով, այնպես էլ անհատ գիտնականներ:

Սույն հայտարարությունը տպագրելուց մեկ ամիս անց մրցութային հանձնաժողովը կսկսի աշխատանքները:

Մանրամասն տեղեկությունների համար դիմել՝ ք. Երևան, Բաղրամյան 24, 40 սենյակ, հեռախոս. 52 13 62:

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ ՀԱՄԱՀԱՅԱԿԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ
info@haygithmnadram.am

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ, հեռ. 56-80-14, 077 31 63 76

Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:

Ստորագրված է տպագրության՝ 25.04.2019 թ.:

"ГИТУТЮН" ("Hayka") газета НАН РА